



## ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՊԱՏԻՎԱԾԸ(\*)

հնարագեղամբ շնորհ Տիգրան  
մեղք Յիսուսի Բրիտանիայի

Սիրելի հաւատացեալներ,

Տարի մըն ալ եկաւ ու անցաւ մեր տօրեայ կեանքէն: Ահաւասիկ կեցած ենք Նոր Տարուան սեմին: Մարդկային կեանքի մէջ մասնաւոր պատեհութիւններ մասնաւոր պարագաներու ներքեւ մեր առջեւ կը բացուին: Երկրագործը կ'ընէ զարնան չցանէ՝ կորնցուցած կ'ըլլայ պատեհ առիթը: Երկաթագործը կ'ընէ շիկացած երկաթը՝ տաք տաք չձեծէ՝ չի կրնար անոր տալ իր ուղած ձեւը: Նմանապէս երիտասարդութիւնը իր սակի պատեհութիւններով մեր կեանքին մէջ մէկ անշամ կը ժպտի մեզի: Զափառաբառով կոչման ունի տարբեր պատեհութիւններ՝ արոնցմէ զուրկ է ալեւորը: Իսկ ձերտնին իր կարգին ունի տարբեր առաւելութիւններ, որոնք օրհնութեան մէծ ժիջոցներ կրնան դառնալ իրեն, երբ ինք ի վիճակի ըլլայ զանոնք զնահատելու:

Ի վերջոյ, ամէն մարդ որ աշխարհ կու գայ, պարտականութիւններ ունի, կեանքի տարբեր շրջաններուն իրագործելի: Ամէնքս ալ պարտինք պատուով և անտրտուն կոտորել զանոնք:

Կեանքի մէջ մեր գտած բոլոր յաջողութիւնները, որով և մեր երջանկութիւնը, պայմանաւոր են մեզի վիճակուած պարտականութիւններուն անթերի ու խղճմտի պատարտմովը:

Կեանքի տարբեր շրջաններուն մէջ սակի պատեհութիւններ կը ներկայանան մեզի, մեր բարի բաղձանքները իրականութեան վերածելու և մեր երազները նոստեցնելու: Իմաստուն է ան որ կրնայ օգտուիլ անոնցմէ: Ամանորը մեծագոյնն է այդ պատեհութիւններէն: Կ'արժէ այդ

առթիւ նոր որոշումներ առնել, ձգտելու համար աւելի բարձր, օգտաշատ և արդիւնաւէտ կեանքի մը:

Ամէն շար սեւեակութիւն աղօթքով և կամքի ուժով կրնայ յաղթահարուիլ, կը պատմուի թէ գինեմով մը երեք յաջորդական Ամանորներու արոնցն ազատագրուիլ իր մօլաթներէն: Առաջինին յաջողութիւնը եղաւ զրկել անհնաւ, երկրորդին՝ մասնակի ու քիչ մը աւելի երկարաժամ, երրորդին ստեղծել յաջողեցաւ յաղթանակը տանել: Ասիկա մեզի կը սորվեցնէ թէ յարստեցնել միայն որ կարող կ'ըլլանք որոշ արդիւնք ձեռք ձգել:

Սամուէլ Սմայլը, հեղինակը շինքնօգնութիւն գրքին, կ'ըսէ. «Կորսուած դանձը առեւտուրով կրկին կրնայ ձեռք բերուիլ, կորսուած տեղեկութիւնը՝ ուսումնաքով, իսկ կորսուած առողջութիւնը՝ բժշկական խնամքով: Սակայն կորսուած ժամանակը կորսուած է յաւիտեան»:

Իմաստուն է այն մարդը, որ այս անցաւոր կեանքէն յաւիտեանակնք կրնայ շահիլ: Քիչին շատը ձեռք կը բերէ, այս աշխարհ աւ օրն, անցաւոր աշխարհէն մնալուն արժեքներ դուրս կը հանէ, մարդկային ժիջոցներով աստուածայինին կը հասնի, ամբամասն պատեհութիւններով յաւիտեանակն դանձերուն կը տիրանայ:

Նոր Տարուան պատգամն է խրատուիլ փորձառութիւններէ, զգաստանալ, վճռել չկրկնել անցնող տարուան ընթացքին գործած սխալները, և փոխանակ անցնող ժամանակը աւաղելու՝ օգուտ քաղել անոր մեզի տուած դասերէն:

Տէրը տայ որ բոլորս ալ 1983 տարին լաւ և ուրախ սկսինք, լաւ շարունակենք և լաւ վերացնենք, նոր յոյսերով, նոր ներշնչութեամբ, նոր գաղափարականով և նորոգուած ոգիով ու սրտով: Սրտագին կը շնորհաւորեմ մեր բոլորի նոր Տարին, մողթելով բոլորիդ նորանոր յաջողութիւն, քաջառողջութիւն, քրիստոնէական սիրով լիացած կեանք, միասնական ոգի, ինչպէս նաեւ տեական խաղաղութիւն համայն աշխարհին, Ամէն:

(\*) Քաղաքի Խոստում Ս. Յակոբեանց Մայր Ծառի բնակէ, Նոր Տարուան առաւօտուն:

ՌՈՒԻԴԵՆ ՎՐԴ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ